## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
## ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2024թ. հուլիսի 11-ին, N 271-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածներով և 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետը և ՀՀ Արագածոտնի մարզի «Արագածոտնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Կիրակոսյանի 2024 թվականի հուլիսի 8-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արագածոտնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Կիրակոսյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործած մասը 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 20 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի հուլիսի 15-ից օգոստոսի 9-ը ներառյալ:
2. Լուսինե Կիրակոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արագածոտնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Արագածոտնի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զինղեկ Սարգիս Հակոբյանին:
3. Լուսինե Կիրակոսյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 12-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 11.07.2024 11:14:17 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457 Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ